







194

ՔԱՂԱՅԱԿԱՆՐՈՒԹՒՒՆ

ՀԱՄԱՌՕՏ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

= ՌՄՂԵ =





4639

21

4633

ԲԱՆ ԱՐԱՆ ԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՄԵՆՈՏ

REV. J. G. M. J. 1879.

20. 17. 02




# Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ե Ա Ց

Ի Գ Ա Ղ Ա Ի Ա Կ Ա Ն Է Մ . Ա Ղ Ա Թ Օ Ն Ե Ա Ն



Ի Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Տ . Տ . Ն Ե Ր Մ Ի Մ Ի  
Ա Ջ Գ Ա Ս Է Ր Ե Ի Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ը Ն Տ Ի Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի Կ Ո Ս Ի  
Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Ց

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ . Մ Ա Տ Թ Է Ո Ս Ի Ս Ր Բ Ա Ջ Ա Ն Ա Ր Բ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ի  
Ե Ի Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Պ Ա Տ Ր Ի Ա Ր Գ Ի  
Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ն Ո Ւ Պ Օ Լ Ս Ո Ց

Բ . Տ Պ Ա Գ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ն Ո Ւ Պ Օ Լ Ս Ո Ց

Ի Տ Պ Ա Ր Ա Ն Ի Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ո Ւ Մ Ի Ի Հ Է Ն Տ Ի Ս Ե Ա Ն

1846 == Ռ Մ Ղ Ե

1846 - 1847

1846 - 1847

1846 - 1847

1846 - 1847



1846 - 1847

1846 - 1847

1846 - 1847

1846 - 1847

1846 - 1847

1846 - 1847

1846 - 1847

1846 - 1847



1846 - 1847

1846 - 1847

1846 - 1847

# ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐՈՒԹՅԱՆ

Քաղաքավարութիւնը ի՞նչ է :

1. ԽՕՍՔԻ՝ խօրաթաղ ու գործքդ ճամբով ընես նէ՛ անոր կ'ըսվի Քաղաքավարութիւն :

2. Քաղաքավարութեան կանոնները բնաւ չի ճանչցող մարդը իր գլուխուստով քաղաքին սովորութիւններուն մէջը պակասութիւն ընելով ատելի կ'ըլլայ ամէնուն :

3. Պակասութիւններնիս չերեւցընելու համար ամէն գործքերնուս վրայ պէտք է աչմնիս չորս բանալ. պէտք է նաև ուրիշին պակասութիւնը ներել. ամէն մարդուն իր տարիքին ու իր աստիճանին վայելիք յարգը պահել. աւմէնուն բարի կամենալ. բայց նայելու ենք որ կամեցածնիս գէշ բան չըլլայ տէ՛ մենք աղէկ կարծած ըլլանք. ահա՛ ասոնք են քաղաքավարութեան կամ սանկ ըսեմ՝ մարդավարութեան մեր ամէն մէկէն պահանջած գլխաւոր բաները :

4. Խօսքերն իս ու գործքերն իս լսող տեսնողներուն մեզմէ գանգատելու առ ի թ մը չտալու համար՝ զգուշութիւն մը կայ որ կ'ընենք, ահա ան է մարդավարութիւնը կ'ըսէ Վասիլեյէր :

Սարգավարութիւնը շատ առաքինութիւններուն պակասութիւնը կըրնայ լեցընել, վասն զի՝ շատ անգամ ընելիք բաներնուս դէմ կը կենայ, գէշ ատիրութիւններնուս ետ կը ձգէ մեզ, չափել կշռել կուտայ մեզի խօսքերն իս, ու գործած բաներնուս տակէն օգուտ կը հանէ ընկերներնուս :

5. Սարգավարութիւնը երկուք կը բաժնուի. մէկին կ'ըսուի սրտանց մարդավարութիւն, որ քրիստոնէական կամ բարոյական առաքինութիւններէն առաջ կուգայ, այսինքն՝ խոնարհութենէն, աստուածսիրութենէն, պարկեշտութենէն, ու բարեսիրութենէն. մէկալին ալ՝ երեսանց մարդավարութիւն կ'ըսուի, որ անձնասիրութենէն, փառասիրութենէն ու շահասիրութենէն առաջ կուգայ :

6. Առաքինութեամբ մարդավար եղող մարդը բնաւ կուսիտ բաներ չընել, իր ամէն պակասութիւնը կը ճանչնայ, անոր համար շատ պարկեշտ կ'ըլլայ, ուրիշին յանցանքը կը ներէ. բայց իրենէն պղտիկ յանցանքը անգամ չուզեր

ներեւ : Քարեսէր ըլլալուն ուրիշները միշտ կը ջատագովէ ու զանոնք պատուելու արժան բան մը կը գտնայ վերանին . ինչ աստիճան մարդ է , ինչ հանգամանք ունի արդեօք , ասոնք չի փնտուեր . որին ըլլայ նէ՛ սրտանց գործը կը տեսնայ :

7. Իր բանին ելլալիքին համար մարդավար եղողը՝ սնասպարձ , ինքնահաւան ու անձնասէր կ'ըլլայ , մէկը սիրէ , յարգէ կամ անոր երախտիք մը ընէ նէ , իր օգտին համար է մինակ . բարեկամութիւն խոստանալները , ցուցուցած փոյթները , (խրը ընմիշ ըլլալները) ըրած մեծարանքները՝ հա՛ խեղդացող մօմէ շինուած արձանի մը վրայ տեսեր ես , հասա մարդուն վրայ :

8. Իրաւ որ պէտք չէ՛ աս վերինին պէս մարդավար մարդուն նմանելու ջանալ , բայց աս ալ կայ որ՝ անանկ մարդու երեսէն այնչափ վտանգ չի տեսնու վեր , այնչափ չի զգուիր մարդ՝ որչափ մէկ բիրտ՝ կրչա ու աղտեղի տղի մը երեսէն :

9. Երեւելի հեղինակին մէկը կ'ըսէ թի , աս լուսաւորեալ դարիս մէջը անբաղարարութեան պակասութիւնը ունեցողը մէկ ուրիշ պարծենալու մեծ հանձար մը (հիւնէր մը) պիտի ունենայ՝ որ գայ ան պակասութիւնը ծած-



կէ : Բայց մարդավարութիւնը մէկին կամքին մինակ յաճնելիլ մըն է . շատ բընական ձիրքերուն տեղը կը բռնէ . հարուտը ու ազքատը սլատուոյ տէր ընող՝ ծերը ու երիտասարդը միօրինակ գեղեցիկ երեւցընող կատարելութիւնը տղայոց վրայ տեսնալէն մարդ շատ կ'ախորժի :

Ինտո՞ր քունէն ելլալու է աւտուանցները , ինտո՞ր աղօթք ընելու է , մարութեան համար ի՞նչ հոգ պէտք է ասնիլ , սառկելու ասնն ի՞նչ պարտք կայ կատարելու :

1. Օրուան ամէն մէկ վայրկեանին մէյմէկ պարտք կը դնէ մեզի քաղաքավարութիւնը , անկողինէն ելլելնուս բռնէ տէ՛ ամէն գործքերնիս քաղաքավարութեամբ պիտի ըլլայ :

2. Տղայ մը դեռ անկողինէն չելած իր սիրտը Մատուծոյ պիտի նուիրէ , ու Մատուծոյ պիտի տղտչէ քի շնորհքը իր վրայէն բոլոր օրը անպակաս ընէ որ՝ իրեն դրուած պարտքերը տեղն 'ի տեղը կատարէ , ու աւելի յօժարութեամբ գործելու դամ պակասութիւններէն ետ մնայ . ահա՛ աս է մէկ տղղին առաջին պարտքը՝ անկողինէն դեռ չելած :

3. Մտ ծառայութեան ու շնորհակալութեան առաջին հարկը Մատու-



ծոյ վճարելէն ետքը , շուտ մը անկողինէն պիտի ելլայ ու որչափ որ հնար է նէ՝ վայելչութեամբ հագովի : Շապիքով կենալը , կուրծքը՝ սրունքները ու ուրիշ գոց պահելու տեղիանքները բաց թողցընելը , գուլպաններուն կապիչները մարդու առջեւ կապելը անշնորհք բան է . մանաւանդ աղջիկները զգոյշ պիտի կենան աս պակասութիւնները չի գործելու , վասն զի անոնց՝ տղաքներէն աւելի ամօթ է :

4. Երեսդ՝ աչքդ՝ բերանդ՝ ձեռքդ զանց մի՛ առներ , լուսն , ականջներդ՝ առղաներդ մաքրէ՛ , մազերդ սանտրէ՛ , եղունգներդ կտրէ՛ , լաթերդ փոշիոտ ( թողոտ ) մի՛ ձգեր . նայէ՛ որ հագածներուդ վրայ պատուած , քակուք , բիծ չըլլայ . գուլպաներդ վար չլնան . ու ոտքիդ ամաններն ալ մաքուր ըլլայ . վերջապէս անանկ հագովէ՛ որ քեզ տեսնողները սա տղին վարքը աղէկ պիտի ըլլայ ըսեն :

5. Հոս պատուիրած բաներէս աւելի առողջութեան օգուտ բան չըլլար , որ մը աս պատուիրած բաներս տղայ մը զանց առնէ նէ , ան տղայէն ամէն մարդ կը գանի , ու անոր ասանկ անշնորհք հագովիլը տեսնողը կ'սկըսէ գէշ կարծիքներ ալ ընել անոր վրայ . աս բանը ան տղին ծուլութեանը կամ

ուրիշ արտաքին կամ ներքին պակասու-  
թիւններուն կուտայ :

6. Հագվելուդ պէս կայնէ՛, ձեռ-  
քդ բարեւ բռնած ու ամփոփ մրտ-  
քով աղօթքդ ըրէ՛, թէ՛ քու թէ՛ ծը-  
նողքներուդ հոգւոյ փրկութե՛ր՝ մարմ-  
նոյ պիտոյքներուն հարկաւոր եղած  
չնորհքը խնդրէ՛ Աստուծմէ՛ :

7. Աղօթքդ լմնցունելուդ պէս գը-  
գնա՛ հօրդ մօրդ ձեռքը պահ , ե ինչ  
որ քեզի պատուիրել կ'ուզեն՝ նէ՛ ա-  
ղէկ մտիկ ըրէ՛, ու պատուիրածնին  
քեզի թեթեւ ալ երեւայ, ծանր ալ  
երեւայ մտադրութեամբ կատարէ՛ :

8. Պառկելու ատենը գալու ըլլայ  
նէ՛ ճնողքներէդ հրաման չառած մի  
քաշվիր երթար քովերնուն . առարվա-  
նին պէս աղօթք ըրէ՛, վայելուչովը  
հանովէ՛, լաթերդ ալ մաքրէ՛ ծալէ՛ ու  
տեղը դիր՛ :

9. Պառկած ատենըդ աջ կողմիդ վը-  
րայ պառկէ՛, չըլլայ որ երեսիդ կամ  
կոնակիդ վրայ պառկիս, առողջութեան  
վնաս է . ու սկրսէ՛ ցերեկուան բոլոր  
ըրածներդ մրամրտալ :

10. Սէկ գէշ բան մը գործեր ես  
նէ՛՝ Աստուծմէ՛ ուղիղ սրտով թողու-  
թիւն խնդրէ՛, ու խօսք տուր Աստու-  
ծոյ՝ որ մէյմըն ալ անանկ ամբշնալու  
գործ չի գործես :

Եկեղեցին ինչպէս կայնելու է :

1. Աստուծոյ խօսքերը իրեն պաշտօնեայնեբուն բերնէն լսելու համար սուրբ տեղ մըն է եկեղեցին . հոն Յիսուս Քրիստոս քեզի կ'ըստասէ՛ որ երթաս պէտք եղած յարգդ պատիւդ ա՛նոր վճարես . եկեղեցին պիտի մտնաս մի միայն քեզի դուրսած պարտքերը կատարելու համար :

2. Թէպէտ ամէն տեղ Աստուծոյ առջեւն ես տէյի կը սեպուիս , բայց առաւել եկեղեցին մէջը . ուրեմն ան տեղ որքան պարկեշտութեամբ կենաս նէ՛ քիչ է :

Վրուխդ առջեւդ ծռէ՛ , խելքդ բուրտիքդ անցած բաներուն մի տար :

3. Պատարագին կամ ուրիշ եկեղեցական հանդէսի մը գանուիս նէ՛ կամաց զրուցէ աղօթքդ որ քովի կայնողդ իրեն աղօթքը չի սխալի . չըլլա՛ որ լեզուիդ ինաս խօրաթես , կամ աղօթքէդ եվել ուրիշ բանի մը խելքդ տուեր ես տէյի դուն քեզ ցուցունես . ասով ուրիշին տուած գայթակղութիւնդ աններելի է :

4. Քարողի ժամանակ ուշադրութեամբ մտիկ ըրէ՛ , որ քարողիչին ըսածներէն բան մը չի փախցունես , ու ան որ երկրիս վրայ Աստուծոյ փոխանորդ

ըլլալով քեզի ինչ որ կը պատուիրէ կոր  
նէ կատարես :

5. Ամէն եկեղեցի երթալուդ տա-  
ճարին վրայի խաչը մէյ մը համբուրէ ,  
ու վայելուչ կերպով մը երեսդ խաչա-  
կրնքելէդ ետքը՝ ներս մտիր :

6. Քրիստոնէական վարդապետու-  
թիւնը դաս առած ատենդ մեր սուրբ  
կրօնքին վերաբերեալ որքան բաներ կան  
նէ՝ սորվէ :

Մեր մերձաւորին ինչ պարտաւորութիւն ունինք :

1. Մերձաւոր ըսելով կ'իմանամք  
առ հասարակ ամէն մարդ , այսինքն՝  
մեզմէ վերերը , մեզի հաւասարները ու  
մեզմէ վարերը , Աստուծոյ առջեւը ա-  
մէն մարդ մէկ է , անոր համար Աստու-  
ծոյ հաճելի ըլլալ կ'ուզեմք նէ՝ պէտք է  
որ անոնք անխտիր սիրենք ու անոնց օգ-  
նենք , ինչպէս սա աւետարանական ա-  
ռածը մեզի կը սորվեցընէ “ Արպէս կա-  
միք թէ արասցեն ձեզ մարդիկ , այնպէս  
արասցիք և դուք նոցա ” :

2. Աստուծոյ պատուիրանքներուն  
մէկն ալ աս է քի՛ մեր մերձաւորը մեր  
խիկ անձին պէս սիրենք . կրնայ մի մէկ  
մարդ մը իր նմաններուն ունեցած  
պարտքը չի կատարել , . . . ներէ՛ ուրի-  
շին պակասութիւնը , վասն զի շատ ա



տեն ալ գուն՝ ուրիշին քեզի ներելուն  
կարօտ կ'ըլլաս :

3. Չափազանց գինի կամ ուրիշ ու  
գեղից ( ու ու հի սայիր ) բաներ խմելով  
խելքը գլխէն գացած խայտառակ տե-  
սարան մը եղող մարդուն վրայ խնդա-  
ցող անկիրթ տղաքներուն մի նմանիր .  
հապա՛ աս ալ ինծի պէս մարդ է տէ ,  
հիմա անասուններուն կարգն է մտեր  
ըսելով՝ մեղքըցիր անիկա :

4. Մի խնդար մերձաւորիդ ան պա-  
կասութիւններուն վրայ որ շտկելը իր  
ձեռքը չէ՛ . միտքդ բեր քի շատ ազեղ ,  
կող , սաստառող ( խամպուռ ) մարդիկ  
արտաքին պակասութիւններնուն տե-  
ղը ներքին կատարելութիւններ ունին :

5. Ատոր համար է որ գեղեցիկ երի-  
տասարդներուն ու աղջիկներուն շատը  
անխելք հպարտ ըլլալնուն ու գէշ վարք  
ունենալնուն համար մարդ չի կրնար ա-  
նոնք քաշել տէ՛ շատ ատեն սեպէ՛ քի  
կ'երթայ բնութեանը պակասաւոր ըս-  
տեղծած մարդիկը կը փնտաէ :

6. Չըլլա՛ որ մէկին խօրաթվածքը  
կամ շարժուածքը խաղը առնես . վասն  
զի ծաղր ըրած մարդդ իմանալու ըլլայ  
նէ՛ այնչափ կը ցաւի որ՝ անոր նախա-  
տական ( ըռզի դպչելու ) խօսքեր ընէիր  
նէ այնչափ չէր ցաւեր :

7. Մերձաւորիդ օգնէ՛ , գլխուն

գէշութիւն մը եկած ատենը ցաւակից  
եղիր անոր , մխիթարէ՛ անկեա որ օրհ-  
նէնք առնես :

8. Աղքատի մը ողորհու թիւն տա-  
լու ատենդ սրգողելով մի տար , որ աղ-  
քասն ալ քեզմէ ողորմութիւն ուղե-  
լուն չի զղջա՛ , ձախորդութեան գալով  
կամ տկարութեան պատճառաւ մար-  
դու ձեռք բանալու երեսը դիմացընող  
մարդը գիտե՛ս ինտոր պիտի մեղքընանք :

Ճնողքներնուս ու վարժապետներնուս ու բոլոր մե-  
ծամեծ մարդիկներուն ի՛նչ պարտաւորութիւն ու-  
նինք :

1. Քեզմէ մեծը պատուէ՛ , պատուէ՛  
վարժապետդ , հնազանդ ու երախտաւ  
գէտ եղիր անոր , սէր ունեցիր վրան ,  
ասանկ ալ հօրդ մօրդ ու բարերարնե-  
րուդ , և գիր սնանց սիրուն քու անձդ :

2. Աշխարհքիս մէջը հայրդ մայրդ  
Աստուծոյ փոխանորդ են քեզի , ման-  
կութիւնդ կը խնամեն , քեզի կրթելու  
կը ջանան , ու անդադար կ'աշխատին  
որ կեանքդ երջանկութեամբ ու քիչ  
աշխատանքով վարես աշխարհքիս մէջը :

3. Անոնց հնազանդ երեւնալու հա-  
մար ինչ որ քեզի կը պատուիրեն նե-  
շուտով կատարէ , թէ որ տրարնջաս  
կամ պատուիրած բաներնին ջրնես նե՛՛



կը մեղանչես , անոնց սիրտը կը կոտորես ,  
պարտքդ չի ճանչցած կ'ըլլաս ու քու  
չահիդ ալ մնաս կը բերես :

4. Օ՛նողքներուդ ի՛նչ պարտք ու  
նիս նէ կատարելով , խոնարհութեամբ  
անոնց հետ խօսելով , քանի որ դուր  
սէն կուգաս նէ՝ ձեռքերնին սրագնե-  
լով՝ պատուէ անոնք , պակասութիւն  
ներնին ծածկէ , մի ըսեր , մանաւանդ  
անոնց պակասութիւն մի դոնար , վասն  
զի՝ Մատուած ըսաւ քի՝ « Պատուեալը  
հայր քս ե զմայր » :

5. Երախտագիտութիւնդ՝ սերդ ու  
բարեկամութիւնդ անոնց ցուցունե-  
լու համար՝ հիւանդ ըլլան նէ՝ կրցածիդ  
չափ հոգ տար անոնց վրայ , երբոր ծե-  
րութեան կամ ուրիշ վիճակի մը մէջ  
դոնուելով օգնութեան կարօտ կ'ըլլան  
նէ՝ գործքերնին տես , ու որչափ քեզի  
ձեռք կրնայ տար նէ՝ անոնց պիտոյքը  
հոգա՛ :

6. Ի՛նաւորութեանդ գէշութիւնը  
ու կրթութեանդ թերութիւնը ցու-  
ցուցած կ'ըլլաս , երբոր ծնողքդ , վար-  
ժապետդ , մեծդ քեզի բան մը կը հար-  
ցունէ տէ անշնորհք պատասխան կու-  
տաս , յանցանք ունիս նէ՝ լռէ՛ մէյմնալ  
մի գործեր ան յանցանքը , իրաւունք  
ունիս տէյի քեզի կ'երեւայ նէ , պար-  
կեշտութիւն արդարացիւր դուն քեզ՝

Ետքը լուռ առջեւդ նայէ :

7. Տղայոց դասատու տէյի դրուած մարդը անշուշտ յաջողակ՝ առաքինի ու ընտրեալ մարդ է . անոր համար անոր քու վրագ ունեցած խնամքը՝ աշխատուած թիւնը քիչ բանով չէս կրնար փոխարիներ :

8. Թէ աղնուականութենէդ թէ բարեբաղդութենէդ աշխարհքիս մէջը ինչ մեծ աստիճանի կը հասնիս նէ՝ հասիր . միտքէդ մի հաներ քի՛ հօրմէդ մօրմէդ ետքը քու ուսուցիչդ աւելի պիտի մեծարես ու անոր երախտագէտ պիտի ըլլաս տէյի :

9. Ի՛նչ որ քեզի կը պատուիրեն նէ՝ շակէ շիտակ կատարէ , պատիժ մը տան նէ՝ տրտունջ չընելով կրէ՛ , ու շաղբու թեամբ խրատնին մտիկ ըրէ՛ , տուած դասերնուն օգուտ քաղէ , ու որ պակասութիւններուդ համար մ՛ընէր տէյի քեզի կը սրբողին նէ՛՝ նայէ՛ որ շուկես ան պակասութիւններդ :

Կարգաւորները ծերերը ու բոլոր պատուաւոր մարդիկը ինտոր պատուելու է :

1. Կարգաւորները պատուէ՛ անոնք պատուելովդ Մտուած պատուած կ'ըլլաս , վասն զի՛ Մտուծոյ սպասաւորները ու փոխանորդներն են , ու իրենց

պաշտօնին պատճառաւը Աստուծոյ աւ  
ուաւել մերձաւոր կը սեպւին :

2. Չքանձ կ'երեւայ որ՝ ծերու-  
թիւնը մէկ պատկառելի բան մըն է ,  
անոր համար տղաքները ինչխտար ծե-  
րը պատուեն նէ՝ քիչ է . ամէն ատեն՝  
էն մեծ պատիւը ծերերուն ընելու է ,  
ամէն հնարաւոր դորձքերնին տեսնա-  
լու է , անոնց ծերութեան պակասու-  
թիւններուն սիրով համբերելու է ,  
մանաւանդ վրանին ամենեւին խնդա-  
լու չէ :

3. Իողալով միշտ մտածէ որ՝ օր  
մըն ալ դուն պիտի ծերանաս , հայրդ՝  
մայրդ ծերացեր են . աս մտածելով  
դուն ծերերը մի ծաղրեր , որ ուրիշ  
աներես տղաքներալքու հայրդ՝ մայրդ  
չի ծաղրեն , ու քու ատենիդ տղաք-  
ներն ալ քեզ չի ծաղրեն :

4. Մի որ տարիքով իրմէ մեծ մար-  
դուն առջեւը պարկեշտութեամբ ու  
ակնածութեամբ չի շարժիր նէ՝ իրեն  
անկիրթ մնալը կը ցուցունէ . յարգոյ  
ծերին երեսն 'ի վեր ծաղրող անզգամին  
քովը մի կենար , փախիր . վասն զի՝ ա-  
նանկ տղան բիրտ է՝ ու երեսին ջուրը  
փախած է :

5. Տարիքով կամ պատուով քեզմէ  
վեր մարդ մի քու գտնուած տեղդ կու-  
գայ նէ՝ ոտքի վրայ ելիր . մինչեւ որ

հրամանն չի տար նէ՝ մի նստիր . բան մը հարցունէ նէ՝ խոնարհու թիւն ըրէ ա նոր՝ ետքը պարկեշտու թեամբ պատաս խան տուր :

6. Մարդավարութիւնը մարդուս մէկ ստացուածք ( վարկէթ ) մըն է տէյի գիտցիր . ինչխտար որ անիկա աղէկ բըռ նեանէ՝ անխտար շահ կը տեսնես անկէ :

7. Հետը մարդավարութք վարված մարդդ՝ իրեն ըրած պատիւներուդ ար ժանաւորութիւն ունեցեր չէ՞ ունե ցեր՝ հոգ չէ՞ . որովհետեւ բարեկիրթ մեծնալուդ դուն ուրիշ կերպ չէիր կըր նար վարվիլ անոր հետ . գիտցիր որ միշտ օգուտ կը տեսնաս ասանկ գովելի վարմունքներէդ . ասոր համար մէկ մարդ մը թէ՛ սոսկ մարդոց հետ , թէ՛ երեւելի մարդոց հետ որչափ առաւել յարգանօք կը կենայ նէ՝ այնչափ իր ու նեցած աղնիւ հանգամանացը յարգը կ'եւելցունէ :

Կերակուրի ժամանակ սեղանի վրայ ինչպէս շարժելու է :

1. Սեղանին նա՛ կողմը նստէ ալ ը սեն նէ՝ դուն մի նստիր , համբերէ՛ որ մէկալ սեղանակիցները ինտոր պիտի նստին նէ՝ դուն ալ տեսնաս տէ անանկ նստիս . ու անձեռոցքդ ( բէշկիրդ )



բանալու մի արտորար :

2. Կերակուրի չսկսած հայրմերդ ըսէ՛ , կերակուրէն ելլալու ատենդ ալ , չեւած՝ հայր մեր մըն ալ ըսէ՛ , փառք տուր Աստուծոյ՝ անանկ սեղանէն ելի՛ր . բայց աս պարտքդ ցած ձայնով կատարէ որ մէկալներուն աղօթքը չի խափանես և ամէնը քեզի չի նային :

3. Սեղանէն նէ՛ խիստ շատ հեռու նստէ , նէ՛ խիստ շատ մօտ . շիտակ կեցիր աթուռիդ վրայ . արմունկդ ( տիրսէկըդ ) սեղանին վրայ մի հեծցներ . մի միայն դաստակդ ( պիլէկդ ) սեղանին վրայ դիր . կերակուր կերած ատենդ անվայելուչ շարժմունքներ մի ըներ :

4. Մանակդ , պատառաքաղդ , դըգալդ , բիւխար աջ կողմդ դիր , հացդ ձախ կողմդ . բաժակդ ( խատէխդ ) ալ աջ ձեռքիդ դիմացը . երբոր դգալդ՝ ան պէտքը չէ՛ նէ բիւխարդ ետ տուր :

5. Մանակդ միշտ ձեռքդ մի բռներ , բան մը կտրելէդ ետքը սեղանին սրվռոցին վրայ դիր , մէյ մըն ալ նորէն պէտքը ըլլայ նէ ձեռքդ ան :

6. Աղը դանակին ծարովը ան , ետքը ծարը սրբէ . քեզի մտեղէն կամ ընդեղէն ( զահրէտլ ) կերակուր մը կամ սէր ( խայմախ ) կամ ուրիշ հեղուկ ( սուրու ) բան մը տալու ըլլան նէ՛ աջ ձեռքովդ տուածնին ան , ձախ ձեռքովդ

ալ առջեւի բիախար տուր . հաւկիթ ,  
պտուղ կամ ինչ չոր բան առնելու ը-  
լաս նէ՝ ձեռքովդ առ :

7. Կերած բանիդ փուշերը , ոսկոր-  
ները , ու ինչ որ չի ուտվիր ու չէս  
ուզեր ուտել նէ , բիախայիդ մէջը մէկ  
քովը դիր , կերած պտուղիդ կուտերը  
մատիդ ծարովը բերնէդ առ , չըլլա՛ որ  
ձեռքիդ կամ բիախայիդ մէջը թուք  
նեւու պէս բերնէդ հանես նետես :

8. Չըլլա՛ որ բիախար բերանդ առ-  
նես տէ մէջի միսի ջուրը խրմես . պի-  
տի խրմես նէ՝ դգալովդ խրմէ . թանրդ  
( չորպագ ) շատ տաք է նէ բերանովդ  
չի փրչես . դգալովդ կամաց կամաց  
խառնէ՛ որ պաղի . ուրիշ կերակուրներն  
ալ մի փչեր պաղի տէյի :

9. Միսին կամ կերակուրին ջուրը  
Լապսիին կամ բիախային մէջէն դրգալիդ  
մէջը մի կորզեր տակը կաթիլ մըն ալ  
չի թողցունելու մտքով . բիախար ալ  
հացով մի սրբեր , ու դգալիդ չեկած  
բանը բիախայիդ մէջը թողցուր :

10. Հացդ մի խածներ . սեղանին  
սփռոցին վրայ ալ մի կորեր , որքան որ  
պէտք է նէ այնչափ փրցուր ամէն մէկ  
անգամին . խնձորն ալ տանձն ալ մի  
խածներ՝ դանակով կորէ , կերած ա-  
տենդ ալ դանակը ձեռքէդ վար դիր :

11. Սեղանի վրայ սպասաւորու-



Թիւն ընելու պէտք ըլլայ քեզի նէ՝ մէկը քեզմէ հաց ուզէ նէ Բիաթայի մէջ դիր, անանկ տուր, ձեռքով մի տար. խըմելու բան մըն ալ ուզէն նէ՝ նոյն պէս բաժակը (խատէխը) Բիաթայի մէջ դիր, անանկ տուր, ուզող մարդը բաժակը ձեռքը առնելուն պէս Բիաթան մէկ դի սու, դանակը, պատառաքաղը, դգալը մէկուն տասնէ կոթը անոր դարձուր :

12. Բիաթաները փոխող մարդը միշտ պիտի նայի որ սեղանակիցներուն մէջէն էն մեծը ո՞վ է նէ՝ անկէց սկսէ փոխել, ու ետքը սեղանին բոլորտիքը պտըտելով պէտք եղողինը պիտի փոխէ խըտրու թիւն չընելով :

Ուրիշ ինչ բան պէտք է նայելու սեղանին վրայ :

1. Նէ խիտ արտորնօք կեր, նէ խիտ ծանր, մեկ պատառ դ վար չի գացած մէկալը բերանդ մի դներ. նայէ որ շըրթունքներուդ ծամելիքներուդ ձայնը չելլէ, դգալիդ ու պատառաքաղիդ վրայ բերանդ որքան բան կըրնաս դներ նէ՝ այնչափ բան սու :

2. Ուրիշէն առաջ քեզի բան տան տէյի Բիաթադ երկնցունելդ, քովի նըտտողիդ Բիաթային մէջ ինչ կայ տէյի նայելըդ, տուած բաներնին հտովտալդ, սիգ

կտորը չեմ ուզեր նա կտորը կ'ուզեմ  
ըսելդ մեծ անվայելուչ բան է . բայց  
որ կտորը կ'ուզես տէ՛յի քեզի ըստիպեն  
նէ , ան ատենը ուղած կտորդ առնես  
նէ՝ զէն չունի :

3. Երբոր հաւեղէն կամ ուրիշ կը-  
տորոտած կերակուր մը կը բերեն խա-  
պախով առջեւդ նէ՝ որկրամուկ մարդոց  
պէս կակուղ կամ խոշոր կտորները մի  
ղատեր :

4. Չեռքիդ սլատառաքաղովը սե-  
ղանին մէջ տեղի կեցած խապախէն բան  
առնելը : մատիներդ , սլատառաքաղդ ,  
դանակդ լղելը , մարդու սիրտ գանեցը  
նելիք բաներ ընելը , ասոնք ամէնն ալ  
մեծ անբաղաքավարութեան նշաններ  
են :

5. Բան կերած ատենդ՝ բերանդ  
չառ մի բանար , որ ծամածդ մարդ չի  
տեսնա . Բիախային մէջի եղած բանին  
վրայ մաղ մը , ժժմուկ մը , կամ մէկ  
գանեւու բան մը ըլլայ նէ , զգուշու-  
թեամբ առ , վերցնուր անիկայ ու դիր  
Բիախայիդ մէջը մէկ քովը՝ որ մարդ չի  
տեսնայ տէ՝ ան ալ քեզի հետ գանի :

6. Պատահաբար բերանդ բան մը  
գրիր տէ՝ նայեցար որ քեզի գէշ կ'ընէ  
կար , Բեշկերովդ բերանդ ծածկէ՝ ա-  
նանկ բերնեդ հանէ ան բանը՝ ու Բիա-  
խայիդ մէջը դիր , որ մարդ չի տեսնէ :

7. Թէ Բիւթային մէջը՝ Թէ սեղանին մէջ տեղը դրուած Բապտիսմին մէջը բան մը կտորելու ըլլաս նէ, նայէ որ նէ քովիններուդ վրայ կերակուրի ջուր ցաթկեցունես՝ նէ քու վրադ :

8. Աղաներդ դանակովդ կամ սրապառաքաղովդ մի խառներ, ոսկորին մէջի ուղեղը (լլիկը) հանելու համար Բիւթայիդ վրայ մի զարներ, աղայով կուտ մի կտորեր, ու նայէ որ բերանդ լեցուն իբէն չի խորաթէս :

9. Կերակուրը սանկ է եղեր՝ նանկ է եղեր տէյի բան մը մի ըսեր, Թէ որ ինտոր է եղեր կերակուրը տէյի քեզի հարցունեն նէ՝ նայէ որ որքան կրնաս նէ գովես :

10. Նայէ քի՛ որ կերակուրէն աւելի կ'ախորժիս՝ որ կերակուրէն չէս ախորժիր չիմացունես : ( ) րինակի համար՝ մի ըսեր ես կովի միս չեմ ուտեր, ես խոզի ապուխտի (պաստրմայի) հոտ չեմ կրընար առներ, Ֆասուլեան ինձի կը դըպչի. խորոված միսը (քէպապը) կը սիրեմ. հաւեղէն կերակուրէն աւելի կ'ախորժիմ քան Թէ ոչխարի մսէն :

11. Թէ որ կերակուրէ մը ամենեւին չէս ախորժիր նէ, նայէ որ չախորժելդ մարդու չի զրուցես. ան կերակուրէն քեզի կտոր մը կուտան նէ՝ դիր Բիւթայիդ մէջը Թող կենայ մինչեւ որ



մէկ ուրիշ կերակուր մը բերեն նէ :

12. Թ՛ան ( ջօրպա ) կերած ատենդ խմելք մի ուզեր , սպասէ որ մէկ ուրիշ բան մ'ալ ուտես . խմելէդ առաջ անձեռոցքովդ ( փէշկիրովդ ) շրթունքդ ու մատերդ սրբէ , բերանդ բան կայ իբէն մի խմեր , խմելք բանիդ վրայ շատ բարակ բարակ մի նայիր , մի մէյմը խըմեր մէյմը կայնիր . մէկ բերանդ առնելուդ՝ որչափ պիտի խմես նէ՝ խմէ :

13. Խմած ատենդ աչքդ ասդին անդին մի ըներ , բաժակը ձեռքդ մի խօրաթեր . խմելէդ ետքը մի հեվար , ու նորէն բերանդ սրբէ :

14. Թէպէտ հիմայ շատ սովորութիւն չէ մէկուն կենացը համար գինի խմել , բայց թէ որ մէկը քու կենացդ համար գինի խմէ նէ՝ գլուխդ պարկեշտութեամբ ծռելով շնորհակալ եղիր անոր . սեղանակիցներուն մէկին կենացը համար խմեն նէ՝ անոր մէկ խոնարհու թիւն մը ըրէ , ետքը քու գինիդ խմէ , տղաքներուն չի վայլեր մարդու կենացը համար գինի խմել . աս բանը մինակ սեղանը գտնուող մեծերուն կը վայլէ :

15. Ա՛մէն բանէն եվել չըլլա՛ որ սրկբամոլ տղաքներուն պէս շէքէրեղէն կամ ուրիշ ատոնց պէս բաներ կամ պտուղ սեղանէն ձեռքդ առնես ելլաս կամ գրպանդ ( ճէպդ ) դնես :

Իսա առնելու ժամանակը կամ դպրատան մէջը ինչ տո՞ր պէտք է կենալ , և տղաքները մէկըմէկու ի՞նչ պատիւ պիտի ընեն :

1. Վարժապետին ինչ պատիւ , ինչ յարգութիւն , ինչ երախտագիտութիւն պիտի ցուցունես նէ , վերը ըսի հերիք է :

2. Քեզի դասին ատենը կամ դըպրատան մէջը ինչ տեղ կը ցուցունեն նէ , հոն նստէ . խօսքի բռնելով , մըշտելով , հրելով , որ և իցէ կերպով ընկերիդ նեղութիւն տալով , մի անհանգիստ ըներ անիկա :

3. Թէ որ ընկերիդ զարնես , կամ անոր մէկ պղտիկ չարութիւն մը ընես նէ՝ անզգամ ըլլալդ ամէնը կ'իմանան , վարժապետդ ալ հասկընալուն պէս քեզ կը պատժէ :

4. Պէտք ըլլայ նէ ընկերներուդ պրզտիկ պղտիկ բարերարութիւններ ըրէ , պակասութիւն մը կարելի է որ գործեն նէ՝ քու կամօքդ մի երթար վարժապետին իմացուներ . ընկերներուդ մէկը սուտ տեղը վրադ յանցանք մը կը ձգէ նէ՝ մի բարկանալով արգարացուներ դուն քեզ , ու ան ընկերիդ դէմ ոխ մի պահեր ներսիդիդ :

5. Իսարնկերիդ ու ընկերներուդ

հետ ալ անուշու թեամբ ու մարդավա-  
րու թեամբ վարով, միշտ քաղցրաբարոյ  
եղիւր, կուխէն փախիր, ու ընկերու-  
թիւն ըրած տղաքներուդ հետ նայէ  
որ միշտ միաբանութիւն ընես :

6. Աւրիշին համար ներողամիտ ե-  
ղիւր, բայց քեզի համար մի ըլլար նե-  
րողամիտ, հասցա խիստ (սէրթ) եղիւր,  
միտքդ բեր քի մենք շատ հեղ մեր կըու-  
նակը գերան կայ տէյի մտքերնուս ան-  
գամ չենք անցուներ տէ՛ կ'երթանք  
մեր եղբօրը աչքին մէջի շիւղը կը տես-  
նանք. մս կտորին վրայ Ազովբօսը ա-  
ղէկ կը գրէ : «Մարդս քովնէն դըժ-  
գոհ է՝ բայց իրմէ շատ գոհ է. ուրի-  
շին պակասութիւնը չորս աչքով կը  
նայի, իրենին գայ նէ կը կուրանայ.  
ափսոս՝ ասանկ է եկեր մարդս՝ ասանկ  
կ'երթայ » :

7. Արժապետդ ընկերիդ սրդողած  
ատենը կամ անոր պատիժ տալն իքէն  
ուրախանալդ հասկցուի նէ՛ գէշ տղայ  
է կ'ըսեն քեզի համար, անկէ ՚ի զատ կը  
մեղանչես Աստուծոյ. վասն զի քրիս-  
տոնէից ընկերսիրութիւն կը վայելէ :

8. Ի՞նչ կերպով կարդալ գրել պէտք  
է քեզի, ի՞նչ բանով կրթութիւնդ կա-  
տարելագործելու ես, ասոնք ինձի չկե-  
նար քեզի ըսել, հասցա՛ միայն վարժա-  
պետդ տարիքիդ կը նայի, խելքիդ կա-



բողո՛ւթեանը կը նայի , գիւրին յառաջ  
կ'երթաս կոր մի , ինչխտար բան գիւ  
տես՝ ան կը նայի , անկէ ետքը սորվե-  
լէք բանրդ ինչ ճամբով պիտի սորվե-  
ցունէ նէ՝ ան պիտի որոշէ . քու պարտ-  
քրդ մինակ անիկա է քի , անոր մտիկ  
ընես , ու ամէն կողմանէ անոր հնա-  
ղանդիս :

Ինչ խաղ խաղալու է՝ ու ինչո՞ւ խաղալու է :

1. Երբոր խաղ մը կը խաղաս նէ՝ մի  
ոտք կոխեր քի ուղած խաղդ խաղան  
ընկերներդ . ինտո՞ր պիտի ընես քի ըն-  
կերներդ քեզի հետ տեսութիւն ընել  
ուղէն տէյի՝ պղտիկութենէ նայէ որ  
սորվիս :

2. Խաղացած ատենդ մէկը քեզ  
ցաւցունէ նէ՝ մի բարկանալով գան-  
գաւ ըներ , որ ցաւցունողը քեզի շը-  
նորհասպարտ մնայ , ու ընկերներդ ալ  
քեզ աւելի սիրեն :

3. Ընտանիքի ու ճարտարութեան  
վերաբերեալ խաղերը խելք հոգնե-  
ցունելու խաղերէն աղէկ են :

4. Իայց կամ օգին գէշութենէն  
կամ ձմեռ ըլլալուն և կամ կամք չի  
կտորելու համար ուրիշ խաղեր հարկ  
կ'ըլլայ խաղալու նէ՝ չըլլա՛ որ նարտի  
(խուճարի) վերաբերեալ խաղեր խա-  
ղաս :

5. Խաղացած ատենդ յաղթեմ տէյի մի ինքրզինքդ չափազանց հոգնեցուներ . յաղթես ալ նէ՝ յաղթըլիս ալ նէ մի ինքրզինքդ փոխեր . խաղ բսածդ փարայ վաստրկելլու համար հնարված չէ՛ , հասլա կարդալէդ կամ աշխատութենէդ հոգնութիւն առնելլու համար հնարուած է :

Խաղին մէջ բանդ յաջող կ'երթայ կոր նէ՝ մի մեծ մեծ խօսիր ուրիշները ծաղր ընելլու պէս :

6. Արթուրեան ( իթմանի ) վերաբերեալ խաղերուն մէջը մեծ զգուշութեամբ շարժէ , որ քեզի հետ խաղացողներուն մնաս մը չի տաս :

Թէ իր տունը թէ ուրիշին տունը ընկերակցութեան ( մէճլիսի ) մէջ գտնուողը 'որ բանը ընելու է 'որ բանը ընելու չէ :

1. Իմաստունին մէկը կ'ըսէ քի՛ ջանաս որ անուշ լեզու , խնտում երես , ու համբերող ըլլաս . բարեկամներուդ տունը երթաս նէ՛ հոն խօսք խօրաթա չի հանէս . հասլա ուրախութիւն բերես անոնց որ՝ ամէն մարդ քեզի հետ տեսութիւն ընել ուզէ :

2. Դատիկոնի մը ( տայրէի մը ) առջև երթաս տէ՛ դուռը գոց գտնաս նէ , կամացուկ մը զարկ դուռը , մինչեւ որ

ներսէն ձայն չի հանեն նէ՛ մի՛ բանար  
գուռը . ներս մտնաս նէ՛ գուռը գոցէ՛  
որ ուրիշին հարկ չըլլա՛ գոցելու , քեզի  
ալ աս ինչ անկիրթ տղայ է չըսեն մըտ-  
քովնին . գուռը ամուր մի գոցեր բա-  
նար , մանաւանդ՝ սենեակին մէջը . քեզ  
մէ վեր մարդ ըլլայ նէ :

3. Ո՛ւր տեղ կամ ի՛նչ պատճառաւ  
կ'ըլլայ նէ ըլլայ , չվայլած ատենը իրա-  
բու վրայ ի՛նչէլ լահներ ընելով վրադ  
խնդացնել մի տար :

4. Քեզմէ վեր մարդ մը քովէդ  
կ'անցնի նէ՛ անոր ճամբայ տալու հա-  
մար քիչ մը ետեւօք քաշվէ . գուռնէ  
մը ներս մտնելու ատենդ է նէ՛ կայնէ  
որ առաջ ան մտնա՛ , սանդուխի մը  
վրայ կը գտնուիս նէ կայնէ որ պատին  
կողմէն ան ելլա կամ իջնա :

5. Մեկերակցութեան ( մէճլխի ) մէջ  
գտնուած ատենդ մարդու մը առջեւէ  
անցնիս պիտի նէ՛ առաջ անոր դարձիր ,  
գլխով խոնարհութիւն մը ըրէ՛ , ետքը  
անցիր . բան մը տալու առնելու ըլլաս  
նէ՛ . քաղաքավարութիւնը ան է որ ,  
ձեռքէդ ձեռնոցներդ ( էլտիվէններդ )  
հանես , անանկ տաս առնես , մէկը քե-  
զի բան մը պատմելու ըլլայ նէ՛ ասդին  
անդին չի նայելով լուռ անոր պիտի մը-  
տիկ ընես :

6. Տղայ մը իրմէ մեծ մարդուն բա-

րեւ տուած ատենը ընտանեբար (թէք լիֆսիզէ) անոր ձեռքը չի պիտի բըռնէ, իրմէ վերին առջեւէն ձեռքը երկընցունելով բան չի պիտի տայ առնէ :

7. Տեղ մը մտնաս նէ առաջ բարև տուր, ետքը ան տեղի մարդիկը նստեր են նէ՝ դուն ալ նստէ, կայներ են նէ դուն ալ կայնէ :

8. Նստիս նէ՝ նստած տեղդ մի՛ փրուվիր, ոտքերդ մի՛ լարեր, մի՛ երթար դար, չիտակ նստէ :

9. Մեկերակցութեան (մէճլիսի) մէջ գտնուող մարդոց բոլորտիքը սլարտելով, չափազանց անոնց մօտենալով, աչքդ վրանին տնկելով կամ անոնց աթուին կրթընելով անոնք անհանգիստ մի՛ ըներ :

10. Մեկիւրթ տղու բան է առաջ անցնելու համար ուրիշը հրել, մարդու վրայ կրթընիլ, շունչը անոր տալ, քրթին կամ բերանին առջեւէն ճրագ կամ ուրիշ բան մարդու տալ :

11. Գանելու բան մը տեսնաս նէ՝ նայէ տէյի մարդու չի ցուցունելէդ ՚ի դատ, անանկ ըրէ որ մարդ ալ չի տեսնայ, գէշ հոտ մարդու առջեւ մի՛ հաներ, մոմ մի՛ մարեր, ու գէշ հոտ ունեցող բանը մի՛ տար մէկին հոտտալու համար :

12. Ինչեւն իբէն յանկարծ մէկին



Թաշկինակը ծաղր ընելու համար քաշել, նստելն իբէն մէկուն աթոռը առ դին առնել անիկայ ձգելու մտքով, գրպանէն Թաշկինակը, Թուղթերը կամ ինչ որ կայ նէ դուրս քաշել, ասոնք ալ մեծ կոսիտու թիւններ են . յանկարծ մարդ վախցունելու տղայական խորամանկութիւններ՝ խաղեր ամենեւին չընես, վասն զի՝ ասանկ բաները կ'ըլլան քի մարդու վնաս տան :

13. Տղաքներուն հետ տեղ մը գրտնուած ատենդ, հոն քեզմէ տարիքով մարդ կան տէ կը խօրաթեն կոր նէ, մէկըզմէկու հետ ձան ձուն չի հանելով խաղացէք :

14. Քեզմէ գաղտուկ եղած բանը հասկընալու մի սլըտըտիր . նամակին հասցէին, մէկին ձեռքի գրած նամակին, բաց ձգած գիրքին կամ Թուղթին վրայ աչք մի տնկեր, ամարդու թիւն է :

15. Գեանէն գրուած Թուղթ մը վերցունես նէ, մի կարդար անիկայ, վրան չի նայած գրասեղանին վրայ դիր, կամ սլ որ ձգեր է նէ անոր տուր . նամակ կամ ուրիշ գրուած մը կրակը նետեր են նէ՝ կրակէն մի հաներ :

16. Սէկը տունը կամ սենեակը չեղած ատենը, ան տունը կամ ան սենեակին մէջը նէ պահանոց (տօլապ) բաց, նէ սնտուկի խորշ (տերէկ) նէ ալ ու-

ըրիշ գոց բաներ , վասն զի՝ մեծ անկրթ-  
 թու թիւն է , ան տղան որ քաղաքավար  
 է գիրք մը անգամ չի պիտի բանայ տի-  
 րոջմէն հրաման չառած , բարեկամին  
 տունը երթայ նէ՝ անոր պարտիզին ծա-  
 ղիկները չի պիտի բրցունէ , ծառին  
 պտուղներուն չի պիտի դպչի :

Թէ՛ իր տունը թէ՛ մարդու մը տուն՝ ուրիշ ետ կենա-  
 լիք գէշ սովորութիւնները որո՞նք են :

1. Մարդու առջեւ քերվտիլը՝ գլե-  
 խուն մազերը շխտելը մարդավարու-  
 թիւն չէ :

2. Մատերովդ քիթդ մի՛ խառներ ,  
 գանելիք բան է , խնչելու բլրաս նէ  
 թաշկինակիդ մէջը խնչէ , կամ թաշկի-  
 նակիդ մէկ ծարովը քիթդ սրբէ , բայց՝  
 զգայչ կեցիր որ մարդ չի տեսնայ :

3. Քիթդ խնչել պէտք բլլալուն  
 պէս՝ կամացուկ մը խնչէ՞ որ քիթդ չի  
 վազէ , ու քովիններուդ գանելիք չի  
 գայ , ամօթ բան է ու ժով խնչելը , փո-  
 ղի ( պոռուի ) պէս խօսեցրնելը ու քի-  
 թը վեր քաշելը :

4. Չեռքդ կամ թաշկինակդ երե-  
 սիդ բռնէ անանկ բռնդ տան , թուքե-  
 րդ նստողներուն վրայ կամ քու վրայ  
 մի ցաթկեցունէր , ու ժով բռնդ տան  
 ալ անկրթութիւն է :

5. Քովդ բռնգտացողին խէր ըլլա՞ մի ըսեր, մի միայն պարկեշտու թեամբ խոնարհու թիւն մը կ'ընես նէ ըրէ՝ :

6. Պատուհանէն վար կամ կրակին մէջը մի թուքներ. թաշկինակիդ մէջը թուք, վրան չի նայած գոցէ՝. ան տըզան որ քաղաքաւար է նէ, ջանայ պիտի որ յաճախ ( սրխ ) չի թուքնէ, որչափ որ կարելի է նէ : Փորձուած է որ շատ մարդ առաւել սովորու թիւն ընելուն յաճախ կը թուքնէ՝ քան թէ թուքը գալուն :

7. Աղունքներդ մի կրծեր, գաննելիք բաներու վրայ մի խօսիր մի անշնորհք բառեր բերանդ առներ :

8. Ամենեւին մարդու առջեւ առզաներդ մի խառներ, եղունգները մի կտրեր, ոտք ձեռք մի լուար, ու վրաց գլուխդ մի շտկեր :

9. Չեռքերդ աղատու է նէ նայէ որ մէկին երեսին ձեռքին լաթերուն չի դսրցունես, վրան զի՝ հէմ կոպխտու թիւն ըրած կ'ըլլաս, հէմ ալ մարդուն լաթերը աղտոտելովդ կը քարկացունես անիկա :

10. Կան անանկ անկիրթ մարդիկ որ դուրս ելլալէն ետքը ներս մտնալն իքէն վրանին շտկելով կը մտնան, որ ինչխտար մեծ ամօթ բան է :

11. Նայէ որ չի երեժ կտաս, քիթիդ տակէն բան չի երգես, ու չի սուլես :

(ըսլըխ չի չալես) . տկարու թեան պատ-  
ճառաւ կամ ուրիշ երեժկոտացողի նա-  
յելով քեզի ալ երեժկոտալ կուգայ նէ՝  
ձեռքդ կամ թաշկինակդ բերանդ բռնէ  
անանկ երեժկոտա՝ որ մարդ չի կուահէ :

12. Սարգու մէջ մրաբելը , ոտքե-  
րը երկնցունել պառկելը քաղաքաւա-  
րու թե՛նէ դուրս բան է , ասոնք ընես  
նէ՝ սրտիդ նեղանալը կը ցուցունես  
նատողներուն , որ շատ աղէկ է ասանկ  
ընելուդ՝ ելլաս երթաս ան տեղէն :

13. Ստքերդ զարնելով անչնորհք  
չարժմունքներ ընելով բարձր ձայնով  
մի խնդար , ճակատդ մի կնճռեր , տա-  
րակուսածի պէս դէմքով մի նայիր բա-  
նի մը վրայ . վերջապէս ան կէտին ներ-  
սի դիդ ինտոր է նէ՝ դէմքիդ ցոյցքն ալ  
անոր նմանցուր՝ հակառակը մի ըներ սր  
ծաղրելի չըլլաս :

14. Որի վրայ ըլլայ նէ ըլլայ , դուն  
ով եսի պէս նայելով խոժու աչքով  
մի նայիր , խոժու աչքով նայիլը մե-  
ծերուն կը վայէ , իրենցմէ պղտիկնե-  
րը սաստելու համար :

15. Շատ կրակին մի մօտենար ,  
պէտք չեղած իքէն կրակը մի խառներ ,  
տեղդ դուրսէն եկողներուն ու մտղ-  
ներուն տուր :

16. Կուղես որ հէմ կոպիտ չերեւաս  
հէմ ալ վտանգէ ազատ մնաս , ուտե-



լու ու խմելու բանէն ՚ի զատ բերանդ  
բան մի առներ . շատ պատահեր է որ  
մարդ գամի պէս , ստակի պէս , ասեղի  
պէս , ու անոնց նման բաներ բերանը  
առեր է տէ , իր անխոհեմութեանը  
զսէ է եղեր :

Խօսակցութեան մէջ տղայի մը խնչ զգուշանալու  
բաներ կան :

1 . Իմաստունին մէկը կ'ըսէ . քի՛ շա-  
տախօսութեան մի լցնար , խօսքին տե-  
ղը չեղած մի խօսիր . շատախօս եղողը  
մարդու նեղութիւն կը բերէ՝ մէկը ան-  
կէ չախորժիր , մէկ խելացի խօսքին տե-  
ղը՝ հարիւր անխելք խօսքեր կ'ընէ :

2 . Մինչեւ որ քեզի բան մը չի հար-  
ցունեն նէ մի խօսիր , ու միշտ պա-  
տասխան տուած մարդու դժայլելիքին  
նայելով՝ սթարոն , խաթուն , տուտու  
ըսելով սկսէ խօսքդ . պաղ բան է հայրս  
կուգայ կոր մի , եղբայրս հոս է մի ըսել .  
հապա՛ խաթուն , հայրս կուգայ կոր  
մի , տո՛ւտու , եղբայրս հոս է մի կը  
վայլէ ըսել :

3 . Միշտ զուարթ երես եղիր , որ  
մարդոց հետ կը գտնուիս նէ՛ անոնց  
պատիւ ըրէ , միշտ մարդավարութեամբ  
ու զգուշութեամբ խօսէ հետերնին .  
հետդ խօրաթելու համար մէկը քովդ

գայ նէ՝ ոտքի վրայ ելիր :

4. Նայէ որ երկդիմի ( թէճնիս ) հասկցվող բառերուն ետքը պարոն , խաթուն , տուտու չըսես . օրինակի համար՝ ի՞նչ ըսել է խող , պարոն , ո՞րն է գուռակ ո՞րն է էշ , խաթուն , մի՞ ըսեր . հասկա՝ խող ի՞նչ ըսել է , պարոն . խաթուն , ո՞րն է գուռակ ո՞րն է էշ ըսէ :

5. Վարձը ձայնով մի՞ խօրաթեր , մանաւանդ՝ քեզմէ վեր մարդու մը հետ խօրաթելու ըլլաս նէ՝ ինչ որ պիտի ըսես նէ շատ պարկեշտութեամբ ըսէ . մէկի մը բան մը ըսելու ըլլաս նէ՝ անունը մի՞ տար . մի՞ ըսեր շնորհակալ եմ պարոն Սուրէն . հասկա՝ շնորհակալ եմ ըսէ մինակ , անունը չի տալով :

6. Վարդու ականջնիվար բան մի՞ ըսեր , թէ որ քովդ մարդ նստեր է նէ . երկու հոգի ցած ձայնով մէկզմէկու հետ կը խօրաթեն կոր նէ , դուն բան մը պատճառ բռնէ հեռացիր քովերանուն :

7. Քեզմէ մեծին խօսքին մի՞ խառնըվիր , մէկուն խօսքը մի՞ կտրեր , քեզմէ վեր մարդուն ըսածին ատանկ է մի՞ ըսեր . թէ որ աղէկ պիտի ըսես նէ՝ ընկերակցութեան ( մէճլխսին ) մէջ եղող մարդուն խօսքը ըրէ , չէ՛ նէ մի՞ ըներ . որչափ որ կարելի է նէ՝ նայէ՛ որ դուն քու վրայովդ քիչ խօսիս , խնդալու

բան մը պատմես նէ՝ առաջ դուն մի  
խնդար :

8 . Մարդը սուտ հանելէն դէշ բան  
չի կայ , մանաւանդ երբ որ խօսված բա-  
նին վրայով քեզի բան մը չեն հարցու-  
ներ նէ . գիտցած մէկ բանիդ վրայով  
դուն ինչ կ'ըսես տէյի տեղ մը քեզի  
դառնայ մէկը հարցունէ նէ , անանկ  
մէկ պատասխան մը սուր որ , որի դէմ  
որ ճշմարտութիւնը ձեռքէ չի ձգելով  
պիտի խօսիս նէ՝ ան մարդը չի նեղա-  
նայ ամենեւ ին :

9 . Արիչք խնդացունելու կամ  
դուն քեզ հանձարեղ ցուցունելու հա-  
մար մարդ մի ծաղրեր . շատ ատեն  
մարդ խօրաթելուն կը զզջայ՝ բայց լուռ  
կենալուն բնաւ չի զզջար . քնկերակից-  
ներուդ հետ ալ կատակ ( շախայ ) կ'ը-  
նես նէ՝ անանկ ըրէ որ սիրտերնին չի  
ծակես :

10 . Կատակի ( շախայի ) համբերէ .  
ամէն մարդ միշտ քեզի պատուեն տէյի  
ուղէս նէ , կամ պղտիկ կատակի մը կամ  
անքաղաքավար բանի մը սրդողելդ ցու-  
ցունես նէ՝ մէկը քեզ չուղեր :

11 . Ինական պակասութիւն մը ու-  
նեցող մարդու մը վրայ ծաղրելով մի  
խօսիր նոյն պակասութիւնը ունեցող  
մարդուն առջեւը . ուրեմն կուրին առ-  
ջեւը կուրի խօսք , կաղին առջեւը կա-

զի խօսք մի՛ ընէր :

12. Խօսքդ ըլլայ տէյի երդում մի՛ ընէր . մէկը պատմած բանիդ ասանկ չէ՛ ըսէ նէ՛ ես գիտէի քի անանկ է ըսէ , գոցէ խօսքը :

13. Սէկը տրտմութեան բան մը պատմելն իբէն խընդալը , ըսել չուզած բանը մէկին ըսէ՛ ըսելը , ու անոր բերնէն անչնորհք պատասխան ակամայ հանել տալը մեծ անխոհեմութիւն է . մէկ տուենին խօսքը մէկալ տուենը տանելը , իմ մտմտացածս շիտակ է տէյի պընդելը (ինատ ընելը) ընկերին չուզած բաներուն խօսքը ընելը , միշտ ասոնք ալ չի վայելու բաներ են :

Ճամբան ժուռ գալու տեղուանքը կամ ուրիշ հասարակաց տեղուանքը ինչպէս վարուելու է մարդու հետ :

1. Ինչպէս մասնաւոր ընկերութիւններուն մէջը՝ անանկ ալ ճամբան ժուռ գալու տեղուանքը՝ ու հասարակաց տեղուանքը բան կայ ընելու , բան կայ չընելու : Ասանկ տեղուանքն ալ անվաշելուչ բաներ ընելու չէ՛ . վասն զի՛ քեզ աղէկ մը չի ճանչցող մարդիկը քու վրադ եւս առաւել խիտ դատողութիւններ կ'ընեն :

2. Ճամբան կամ ժուռ եկած ատե-



նըդ բան մի ուտեր , ասիկա միայն խիստ  
պղտիկ տղայոց ներելի բան է , վասն զի  
միշտ ուտելիքի կարօտ են :

3. Կամաց խօսէ , քիչ խօսէ , մատով  
մարդ մի ցուցուներ , որի համար կը  
խօսիս կոր նէ՝ չըլլա որ անունը տաս .  
վասն զի՝ կ'ըլլա քի մէկը կը լըսէ տէ կը  
կարծէ քի անիկա ծաղը ընելու ես ին-  
կեր :

4. Քալելն իքէն գլուխդ շտակ  
բռնէ՝ պարկեշտութեամբ առջեւդ  
նայէ . շատ ճամբաց պիտի քալեսի պէս  
խրղղնալով ձեռքերդ մի տանիր բերեր .  
նէ չափազանց արտորնօք , նէ չափա-  
զանց ծանր քալէ . ձեռքերդ ետեւդ  
մի կապեր , ձեպդ ալ մի դներ , մի ցաթ-  
կուտեր , ոտքերդ մի քսեր , ոտքովդ առ-  
ջեւուդ ետեւուդ բան մի նետեր :

5. Երբոր բազմութեան մը մէջ կը  
գտնուիս նէ՝ առաջ անցնիմ տէյի՝ առ-  
ջեւդ գտնուող մարդիկը մի հըրեր .  
խոնարհութիւնը ու պարկեշտութիւ-  
նը ան է որ անանկ տեղուանք մարդու  
չի դպչիս , միայն ձեռքդ քիչ մը առաջ  
տանիս քեզ պաշտպանելու համար :

6. Ընկիրթ տղաքները՝ ինչ կ'ըլլայ  
բտելով՝ երբեմն պատուելու մարդիկ-  
ներուն հետ կատակ ( շախայ ) կ'ընեն ,  
որ ան կատակը նախատինքի պէս է ան  
մարդուն :

7. Կան անանկ լիրբ տղաքներ որ մարդուն կունակը կամացուկ մը թուղթ կը փակցունեն, կիրով (քիրէճով) բան կը գրեն, անցնող դարձողի վրայ ջուր կը սխմեն, ու ալ ուրիշ կերպ շատ չարութիւններ կ'ընեն՝ խահեմութիւնը ի՛նչ է, զգուշութիւնը ի՛նչ է չի նայելով, որ մարդուն վրայ աս անշարճք բաները կ'ընեն նէ՛ ան մարդը անտէք չի կըրնայ պատժել ալ նէ, աս ինչ գէշ տղաքներ են կ'ըսէ անշուշտ :

8. Ասանկ բաներ տեսած ատենդ խնդաս նէ, ըրածներնուն հաւներ ես տէյի կ'երեւայ, կ'երթայ անունըդ սէպէ քի՛ անանցինին հետ կը կտորի, անանկ է նէ երբոր ասանկ սիրտ ծակելու բաներ կը տեսնես նէ՛ մի խնդար որ ընողն ալ երես չառնէ, ասանկ բաները ծերերուն ու անկար մարդիկներուն ընես նէ աւելի անզգամութիւն ու կոպիտութիւն է :

Թշուառ մարդուն վրայ ու անոր դժբաղդութեանը վրայ խնդալը անգութ մարդիկներուն մէջը մէկ մեծ սու վորութիւն մըն է եղեր. բայց խնդալնին շատ չի քշեր, վասն զի ասոր թըշուառ մարդը նախատողը՝ վաղը ինքը անկէ շատ ողորմելի պիտի ըլլա :

9. Աննչցած մէկդ առջեւդ ելլայ տէ քեզ բարեւէ նէ՛ ինչխտար շատ

պատուաւոր մարդ է նէ՝ բարեւը այնչ  
չափ խոնարհութեամբ առ :

10. Այս մարդը քովդ գայ տէ ինչ  
բան հարցունէ նէ , քաղաքավարու  
թեամբ պատասխան տուր , ու նայէ որ  
միշտ խօսքդ պարոն , խաթուն , տու  
տուով սկսես , ու անկէ զատուած աւ  
տենդ ալ անոր նորէն խոնարհութիւն  
մը ըրէ :

11. Մինչեւ որ հիւանդ չըլլա կամ  
հիւանդութենէ նոր ելած չըլլա նէ՝  
քեզմէ վեր մարդուն որովիտութիւնը  
չես կրնար հարցուներ :

12. Ղամբան մի ետեւդ դառնար  
ուրիշին վրայ նայիր , վասն զի մարդուն  
անանկ կուգայ քի անոր հագվածքին  
կամ շարժվածքին կամ մէկ ըրածին պա  
կասութիւն մը պիտի գրտնաս :

13. Եւս գալու տեղուանքը քեզ  
մէ վեր մարդու մը քովէն քալես նէ՝  
նայէ որ վար սեպված կողմէն քալես ,  
երեք հոգի մէկ տեղ ճամբայ երթան  
նէ պատուաւոր տեղը երկուքին մէջ  
տեղն է , անկէ ստորին տեղը մէջ տե  
ղէն գացողին աջ կողմն է , երկու հո  
գի մէկ տեղ երթան նէ՝ պատուաւոր  
տեղը միշտ աջ կողմն է :

14. Ղամբան պարիսպի մը կամ տան  
մը քովէն երթալն իբէն՝ պատին մօտը  
վեր տեղն է , ուրիշ ատենը որ տեղը

որ աւելի յարմար է նէ՝ ան՝ անդը մեզ  
մէ վեր մարդուն կամ սրտուել ուզած  
մարդիկներնու սրտելու եմք :

15. յուռ եկած ատենդ ընկերդ մի  
ձգեր ան առաջ երթար, ճամբու մը  
գլուխ եկած ատենդ պիտի դառնաս  
նէ՝ քովի մարդէդ առաջ մի դառնար,  
դառնալն իբէն ալ մի կռնակդ անոր  
դարձուներ, երեսդ դարձուր :








The first part of the paper is devoted to a description of the  
the other part of the paper is devoted to a description of the  
the other part of the paper is devoted to a description of the  
the other part of the paper is devoted to a description of the  
the other part of the paper is devoted to a description of the  
the other part of the paper is devoted to a description of the  
the other part of the paper is devoted to a description of the  
the other part of the paper is devoted to a description of the  
the other part of the paper is devoted to a description of the  
the other part of the paper is devoted to a description of the







1846









U. 2.

N<sup>o</sup> 4633

W